ՎԱՇԽԱՌՈՒԹԻՒՆԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԻՒԱՂՈՒՄ [1]

Ահա նոր, միանգամայն իրական ֆակտեր, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ հրէշաւոր չափերի է հասել վաշխառուութիւնը Ախալքալաքի գաւառում։

Ես վերցնում եմ երկու պատահական գիւղ՝ Ջիգրաշէն և Խոջաբէկ և այնպիսի դէպքեր, որոնք պատահաբար են լայտնի դարձել ինձ։ Սկսում եմ Ջիգրաշէն գիւղից։

Աղամ Շահնազարեան, ութ տարի սրանից առաջ, ախալքալաքցի մի պարոնից, որի հազարների և աղալական ապրուստի միակ աղբիւրը վաշխառուութիւնն է, վերցրել է կէս սոմար ցորէն (մինչին թւով սոմարն արժէ 16 ռ.)։ Այդ ութը տարուայ ընթացքում գիւղացին իր պարտատէր քաղաքացուն կէս սոմարի (8 ռ.) տեղ տուել է 2 սոմար ցորեն, 60 ռ. փող և էլի մուրհակով մնացել է 60 ռուբլի։ Հիմա պարտատէր աղան մուրհակը ծախել է մի ուրիշ վաշխառուի, որը վեր է գրել խեղճ Աղամի տան գերանները, նրա միակ սեփականութիւնը, և մտադիր է քանդել գիւղացու գերտնափոր չինութիւնը, որ գերանները ծախէ և դրանով բաւականութիւն տայ իր արիւնարբու ինտրինկտներին։

Գալուստ Պապիկեան 9—10 տարի սրանից առաջ վերցրել է նոյն վաշխառու աղայից 4 կոդ ցորեն, 4 կոդ էլ գարի (16 կոդը մի սոմար է)։ Տուել է 30 ռուբլի մէկ, 10 ռուբլի մէկ և 8 ռ. մէկ։ 10 ռուբլի էլ տուել է տանուտէրին, որ տայ պարտատիրոջը, բայց ինչպէս ասում է ինքը՝ Գալուստը, տեղ չէ հասել։ Եւ կրկին պարտ է 13 ռուբլի։ Տաներկու հոգուց բաղկացած ընտանիքի տէր այդ խեղճ գիւղացին ունի միայն 3 հատ ոչխար և հազար ռուբլուց աւելի պարտք։

Յովհաննէս Մարտիրոսեանը ութ տարի առաջ առել է նոյն վաշխառուից մի սոմար գարի և 4 կոդ ցորեն։ Մի սոմար գարու տեղ տուել է 2 սոմար գարի և մնացել է պարտ կրկին 8 կոդ գարի, իսկ 4 կոդ ցորենի պարտքը դառել է 24 կոդ ցորեն։ Այդ 7 կոդ գարու և 24 կոդ ցորենի մուրհակը անցել է մի ուրիշ վաշխառուի, որը սկսել է ճորտի նման վաճառած գիւղացուց պահանջել 80 ռուբլի։ Սրա տեղ գիւղացին իր նոր

---

[1]) Արտատպուածք, որի համար տես «Զանազան լուրեր»։ ԽՄԼ.

հոգեհանին տուել է 12 կողոց (2 օրավար) մի տարի «Ախչա-Ֆալասրզ», որ տառացի նշանակում է—փող՝ առանց տոկոսի. պարտատերը իբրև թէ պարտքից տոկոս չ՝ վերցնում, բայց ձրի օգտուելով սակաւահող գիւղացու վարկաւորներից՝ իսկապէս հրէշաւոր տոկոս է վերցնում։ Սա գիւղացու համար մի սարսափելի չարիք է, որի առաջը կառավարութիւնը փորձեց առնել 1895 թ-ի մի շրջաբերականով, որը համեմատական օգուտ տուեց միայն։ Այդ հողից վաշխառուն օգուտ է 2 տարի և վերդրել է մօտաւորապէս 50 ռուբլու հաց և 40 ռուբլու խոտ։ Այդ բոլորից չորս վաշխառուի ձեռքին էլի կայ 20 կող ցորենի մուրհակ և չգիտեն որքանի կատարման թերթ (исполнительный листъ)։

Թորոս Բ-թոլեանի հանգուցեալ եղբայրը ութ տարի սրանից առաջ Էչմիածնի մի վաշխառուից վերցրել է մի սոմար գարի՝ 7 ռուբլի արժողութեամբ։ Այդ 7 ռուբլու տեղ վաշխառուն ստացել է երկու մեծ գերանները՝ 16 ռուբլու արժողութեամբ և 45 ռ. փողով. բացի դրանից՝ հէնց հիմայ կրկին պահանջում է 77 ռուբլի, իսկ եթէ Բ-թոլեանը փողը չկարողանայ տալ՝ սպառնում է խլել նրա ունեցած-չունեցած 5 սոմար ցորենը։ Ուրեմն վաշխառուն 7 ռուբլին չինել է 138 ռուբլի։ Հէնց այդ ձեով է նա գիտել իր տասնակ հազարները։ Հարկաւոր եմ համարում աւելացնել, որ Թորոս Բ-թոլեանի 19 հոգուց բաղկացած ընտանիքը ունի միայն մի զոյգ եզ, 2 կով և 38 ոչխար.—Նոյն գիւղացին մի ուրիշ վաշխառուից վերցրել է մի սոմար հաճար. փոխարէնը տուել է մի հրացան՝ 15 ռ. արժողութեամբ, 25 ռուբլի փողով և մի եզ, որը վաշխառուն գնահատել է 25 ռ., Հիմայ մուրհակով կրկին պարտ է 19 ռուբլի։

Արապիոն Նիկողոսեանը 1894 թուականից մուրհակով պարտ է եղել մի վաշխառուի 40 ռուբլի, որի փոխարէն վաշխառուն 3 տարի շարունակ օգտուել է նրա երկու օրավար վարելահողից և կրկին պահանջում է 72 ռ.։

Մի ուրիշը՝ Իգնատիոս Խոտիկեան, մօտ 8 տարի առաջ վերցրել է Ախալքալաքի ընակիչ մի հրէայից 50 ռուբլի, որի տեղ նա տուել է մօտ 300 ռուբլի։

Վերև չիշուած Գալուստ Պապիկեանը մի վաշխառուից վերցրել է մի սոմար գարի և կէս սոմար ցորեն (միասին մօտ 16 20 ռ. արժողութեամբ), որի տեղ տասը տարուայ ընթացքում, իր ասելով, տուել է մօտ 500 ռուբլի և էլի պարտ է 13 ռ., որը, իբրև բունկալ, Աստուծոյ ողորմութիւնով և նոյն օրէնքի ուժով նոյնպէս հարիւրների կը հասնի։ Խեղճ Գալուստը 500 ռ. այսպէս է հաշուում. երեք տարի շարունակ ամբողջ ընտանիքով՝ բաղկացած 4 տղամարդից և 3 աշխատաւոր կանանցից՝ և 3 զոյգ եզով ձրի ծառայել են վաշխառուի տանը, կատարել են նրա բոլոր դաշտային աշխատութիւնները, միայն ստացած հացը կիսելով։ Վաշխառուն, տեսնելով որ վերջին աշող տարին բաւական բաժին է ընկել Գա-

լուսորին իր պարտքի տեղ, որը ինչպէս վերև ասացինք, հաւասար էր 16—20 ռուբլու, վերցնում է նրա ամբողջ բաժինը—25 սոմար ցորեն, 3 սոմար կրաւար, 3 սոմար հաճար, 5 սոմար գարի, 14 սալ սարի խոտ, $2^1/_2$ սալ յարոսի խոտ և ահագին ընտանիքի միակ լոլս ու ապաւէն երեք զոյգ եզը... Եթէ այս բոլորը փողի վերածենք, ի հարկէ, 500 ռուբլուց չատ աւելի կը լինի։ «Բոլոր ունեցածս ձեռքիցս առնելուց յետոյ՝ վաշխառուն մի փոթորիկ գիշեր մեզ դուրս արաւ, և մենք պատսպարուեցինք անտ այս մարդու տանը»,—խեղդուած ձայնով աւելացրեց խեղճ Գալուստը, ցոյց տալով մօտը կանգնած գիւղացուն։ Տեսնում էք, ինչ տեսակի հերքուլէսեան սիւների է հասել վաշխառութիւնը Ախալքալաքի գաւառում, և դեռ «Մշակի» Ղազախի թղթակիցը ասում է, թէ ոչ մի տեղ վաշխառութիւնը այնպէս չէ զարգացած, ինչպէս Ղազախում [1]։

Նոյն Գալուստ Պապիկեանը 10 ռ. է վերցնում մի վաշխառուից, որի մեռնելով՝ մուրհակը անցնում է ժառանգներին, որոնք սկսում են պահանջել 80 ռուբլի։ Դրա տեղ Գալուստը տուել է 35 ռ. փողով և մի տարի մշակութիւն է արել 50 ռուբլով, որ նոյնպէս հաշուել են։ Բացի դրանից՝ տա հինգ տարի է, որ վաշխառուն օգտուում է Գալուստի 6 կողնից մի տափով և մի տարի էլ դեռ պիտի օգտի։ Վաշխառուի ժառանգների բաժանելովը՝ 8 ռուբլու պարտատէրը դառել է մի եղբայրը, և այդ 8 ռուբլին հիմայ հասել է 40 ռուբլու։

Յարութիւն Քթոյեան մի խոջաբէկցի վաշխառուից վերցրել է 12 ռ., որի տեղ վաշխառուն ահա 4 տարի է օգտուում է պարտապանի 14 կոդնոց արտից, որից տարեկան օգուտ ստանում է մօտ 40 ռ. բացի դրանից՝ այս տարի 6 սալ խոտ է վերցրել, որ արժէ 30 ռուբլի. և դեռ երկու տարի էլ պէտք է օգտի այդ արտից։

Գալուստ Գրիգորեան վերցրել է մի վաշխառուից (Ղաուրլեցի) կէս սոմար գարի և 4 կոդ հաճար. տուել է 4 կոդ ցորեն, 8 կոդ գարի, մի հրացան, էլի 10 կոդ ցորեն։ Մնացած 15 կոդ գարու և 5 կոդ ցորենի տեղ տուել է 50 ռուբլու մուրհակ և իր մի արտը։

Տասն և մէկ դէպք մի գիւղից։ Այժմ տեսնենք խոջաբէկ գիւղը։

Կարապետ Փութուլեան մի ժամանակ մի վաշխառուից վերցրել է 100 ռուբլի, որի տեղ տուել է՝ 80 ռ. փողով և 13 կոդ գարի. բացի դրանից՝ վաշխառուն երեք տարի օգտուել է պարտապանի մի արտից (75 ռ.). յետոյ զանազան ժամանակներ մանր-մունր տուել է 15 ռ. 20 կոպ., 55 ռ. էլ մէկ է տուել և դեռ էլի պարտ է 219 ռուբլի։ «Հայրս 70 տարեկան է

---

[1]) Ղազախի գաւառի վաշխառութեան մի նկարագիրը տրուած է Մուրճ'ում այն ձևով, ինչ ձևով որ գրուած է ներկայ յօդուածը։

ԽՄԲ. ՄՈՒՐՃ'Ի։

և իր ամբողջ կեանքում դերի է եղել այդ վաշխառուին. ես ահա 40 տարեկան եմ, նոյնպէս գերի եմ եղել միշտ. ասում եմ—արի, տանս գերանները տար, հոգիներս ազատիր,—չէ ուզում. չգիտեմ, ինչպէս ազատեմ ճորտութիւնից ընտանիքս, եղբօրս որբերը» (բոլորը 10 հոգի),—աւելացրեց Կարապետ Փուլթուլեան։ Նոյն գիւղացին նոյն վաշխառուի ազգական մի ուրիշ վաշխառուից մի ժամանակ վերցրել է 20 քթոց լարդ և, որքան լիշում եմ, 30 ռ. փոդ։ Դրա տեղ տուել է 80 ռ. մէկ, 45 ռ. մէկ և էլի պարտ է 105 ռուբլի։

Ե։ այսպէս շարունակ։ Ախալքալաքի գաւառի 108 գիւղերի մեծ մասը Զիզրաչէնի և Խոջաբէկի օրումն է. միայն դուխոբորները ոչ հարստահարում են, ոչ էլ հարստահարուում. դրանք իրանց խնայած կապիտալները դնում են գանձարանին կից խնայողական կասսայում, որի մասին գաղափար էլ չունեն մեր գիւղացիները։ Սակայն, մի դուխոբոր՝ երևի հայերից վարակուելով՝ հարստահարում է, ի հարկէ, հայ գիւղացիներին։ Ահա որտեղ է մեր ձրիակեր, շատ անդամ թղթամոլ աղաների հազարների աղբիւրը, աղաների, որոնք ոչ խղճի օրէնք են ընդունում, ոչ էլ պետական օրէնքից են վախենում։

Ի՞նչ սոսկալի դրութիւն է, ինչ պիտի լինի սրա վերջը։ Կարելի՞ է, արդեօք, խելացի և նպատակաւորմամբ կերպով կռուել չարիքի դէմ [1]), թէ անօգուտ է, ձեռքերս ծալած՝ պիտի նստենք։ Զարմանալի է, որ մեր խեղճ պարտապան գիւղացիները դեռ կարողանում են չարունակել իրանց թշուառ գոյութիւնը։ Ճիշդ որ՝ գիւղացին ալրի ջուլ է. որքան էլ թափ տաս՝ թոզ կը բարձրանայ, կամ, ինչպէս շատ վաշխառու քաղաքացիներ ասում են, գիւղացին բանկ է, որը անկորուստ պահպանում է քաղաքացու փողը և դեռ զարմանալի արագութեամբ աճեցնում է։ 30 ռուբլի մի գիւղացու տուր թէ չէ՝ կարող ես տասնեակ տարիներ անպատիժ կերպով խլել նրա արիւն-քրտինքի աղնիւ վաստակը։ Ժամանակ է լուրջ մտածելու՝ գաւառներում էժան կրեդիտալին հիմնարկութիւններ բանալու մասին։ Դրանով միայն կարելի կը լինի գիւղացուն ազատել վամպիր-վաշխառուների ճիրաններից։ Ախալքալաքի գաւառում այդ բանը կարելի է հեշտ գլուխ բերել գիւղատնտեսական կապիտալի միջոցով, որից մեր գաւառի բաժինը հասնում է 250 հազարի։

ՍԱԼԼԻՄԵԱՆ

---

[1]) Կռուի սկիզբը պիտի լինի հատ-հատ դէպքերի հրատարակութիւնը մամուլի մէջ։ Ծան Մուրճի Խմբ։